

ԿՈՒՆՈՑՍ ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎԸՐԴԵԱՆԸՆ ԵՒ  
ՀԱՄԱՅՆ ՆԸՆՁԵՑԵԼՈՑՆ Ի ԴՈՒՌՆ ԴԵ  
ՎՈՑԱՅ ՍԲ ԳԵՈՐԳԻՆ ԾԵՌԱՄԲ ԴԱՎԻԹԻ  
ՈՐԴԻ ՅԱԿՈԲԻՆ ՌՄԼԳԻՆ, (= 1784):

Յատուկ Ս. Գէորգայ առաջնորդ-եպիսկոպոսներէն կը յիշուին միայն՝ «Մկրտիչ եպիսկոպոսն որ յԱթոռն Ս. Գէորգայ ՏԷԼԷԿՍԷՅՈՒՎԱՆԻՅ, (մագաղաթեայ բոլորգիր Աւետարան, գրեալ ի Սեբաստիա 1636ին, Նաթանեան, անդ, էջ 100). նոյն անձը կը յիշուի նաեւ նոյն միջոցին՝ իբր 1636ին՝ «Սեբաստացի Ներսէս Ա., այր վսեմ եւ հանճարեղ, որ եւ յետոյ եղեւ կաթողիկոս Սոսյ... Ժողովեալ առ ինքն զառաջնորդս վանօրէից նահանգիս Անդրէաս արքեպ. ն Ս. Նշանի աթոռոյս, Նիկողայոս եպն. Ս. Հրեշտակապետի, Յոհաննէս եպն. Ս. Անպատի, Մկրտիչ եպ. ն Ս. Գէորգայ, Յոհաննէս եպ. Խնդրակատարու...», (Գ. ք. Աղան. Դիւան, Ժ., էջ 400): Ս. Գէորգայ վանքը կը յիշուի անգամ մ'ալ 1777ին Սեբաստիոյ քաղաքին եկեղեցիներուն եւ ուրիշ վանքերու հետ, որոնց «ընդհանրական առաջնորդ, կը կարգուի՝ Էջմիածնի Սիմէոն Կթղս. էն 1777 Յունիս 4ին (Գ. ք. Ա. Դիւան Ժ., էջ 420) Յակօբ Բ. Արք. Սեբաստիոյ:

Արդ, իմ ծանօթութեանս հասաւ սոյն Տէվէքսէի կամ Դեւոցա վանքի ուրիշ մէկ Առաջնորդ եպիսկոպոսը կամ Արքեպոսն. որ ժԸ դարուն ապրած պիտի ըլլայ. եւ՝ ինչպէս յաջորդներէն պիտի տեսնուի, առանց տարա-